ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«09» Նոյեմբերի 2018 թվականի № 138-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2018 թվականի սեպտեմբերի 26-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ-81 և 2018 թվականի հունիսի 05-ի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 1390 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018թ. մայիսի 21-ի թիվ Ֆ-175/18 գրությունը, «Քարհանք» ՍՊ ընկերության 2018թ. մայիսի 05-ի թիվ 11 գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Քարհանք» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 41,6 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/591 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջանի պիրոկլաստիկ տուֆերի հանքավայրի պաշարների 1.X=4460512 Y=8430794, 2.X=4460618 Y=8430596, 3.X=4460998 Y=8430478, 4.X=4461030 Y=8430680, 5.X=4460968 Y=8430708, 6.X=4461014 Y=8430966, 7.X=4461066 Y=8430946, 8.X=4461122 Y=8431114, 9.X=4460990 Y=8431152, 10.X=4461148 Y=8431512, 11.X=4460734 Y=8431614, 12.X=4460672 Y=8431566, 13.X=4460732 Y=8431424, 14.X=4460618 Y=8431248 15.X=4460610 Y=8431170, 16.X=4460652 Y=8431012 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքներում արդյունահանում կատարելու համար, հատկացնել 2 015 070. մ^3 տուֆերի մարվող պաշար և լեռնահատկացման թիվ Լ-591 լեռնահատկացման ակտը՝

1.X=4460512 Y=8430794, H=1101 h=0, 2.X=4460618 Y=8430596, H=1101 h=0 3.X=4460998 Y=8430478, H=1115 h=0 4.X=4461030 Y=8430680, H=1105 h-0 5.X=4461066 Y=8430946, H=1092 h=0 6.X=4461122 Y=8431114, H=1087 h=0 7.X=4460990 Y=8431152, H=1078 h=0 8.X=4461148 Y=8431512, H=1080 h=0 9.X=4460734 Y=8431614, H=1078 h=0 10.X=4460672 Y=8431566, H=1080 h=0 11.X=4460732 Y=8431424, H=1085 h=0 12.X=4460618 Y=8431248, H= H=1085 h=0 13.X=4460610 Y=8431170, H=1088 h=0 14.X=4460652 Y=8431012, H=1088 h=0 տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 41.6 հա տարածքով:

2. Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել 45 000մ³ տուֆի զանգված:

3.Կնքել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-591 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ավդրամանի պեմզային տուֆերի հանքավայրի Ձոր տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման ընդերքօգտագործման թիվ Պ-591 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

11/9/2018

X

VERIFIED OCSP 09-Nov-18 13:21:30 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118